



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2018 թ.

ՀԵԼՄԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՅԻՆ

Ձեր 22.03.2018թ. թիվ Ե-2018-207 գրությանը.

Հարգելի պարոն Սաքունց

ՀՀ Լոռու մարզպետարանում քննարկվել են Ձեր գրությունում բարձրացված հարցերը, որոնց կապակցությամբ տեղեկացնում եմ.

6. «Բաց հասարակություն» ՀԿ-ի հետ համատեղ հոգեկան հիվանդների խնամք իրականացնելու նպատակով Սպիտակ քաղաքում ստեղծվել է հոգեկան առողջության կենտրոն՝ նախատեսված 16 հիվանդների համար: Կենտրոնը սկսել է իր գործունեությունը 2016թ. հունիսի 1-ից: Ներկայումս կենտրոնում սպասարկվում են 11 հիվանդներ: Հոգեկան առողջության կենտրոնի տարածքը տրամադրվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, վերանորոգման աշխատանքները կատարվել է Սպիտակի համայնքապետարանի կողմից:

8. Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունն ի զորու է իրականացնել «Լոռու մարզային հոգեոնկալական դիսպանսեր» ՓԲԸ-ն: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով մտավոր և հոգեկան զարգացման խնդիրներ ունեցող երեխաների և դեռահասների համար 2014-2017թթ ցերեկային կենտրոններ չեն ստեղծվել: Վանաձորի և Սպիտակի հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում պետբյուջեի միջոցներով 2018-2019թթ-ին Վանաձորում, Սպիտակում, Ստեփանավանում և Ալավերդում նախատեսվում են նման խնդիրներ ունեցող երեխաների համար ցերեկային կենտրոններ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ արդեն իսկ 2017թ. ներառական կրթության ծրագրով մարզի դպրոցներում խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատում է բազմամասնագիտական թիմը:

10. Լոռու մարզում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների խնամքի համար շուրջօրյա և ցերեկային հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու հարցը չի քննարկվել, քանի որ ներկայումս չկա դրա անհրաժեշտությունը և ֆինանսական միջոցներ: Լոռու մարզում հոգեբուժական հիվանդանոցային և ամբուլատոր ծառայություններն իրականացնում է «Լոռու մարզային հոգեոնկալական դիսպանսեր» ՓԲԸ-ն, իսկ տարածաշրջանների բժշկական կենտրոններում՝ հոգեբուժական կաբինետները:

11. Ուսումնասիրելով և գնահատելով Սպիտակի հոգեկան առողջության կենտրոնի աշխատանքը՝ 2017թ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից որպես համաֆինանսավորում Սպիտակի հոգեկան առողջության կենտրոնին է տրամադրվել պետական աջակցություն՝ 12444.0 հազ. դրամ չափով:

13. ՀՀ Լոռու մարզի սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների (Վանաձորում՝ բաժին, Սպիտակի, Ստեփանավանի, Թումանյանի և Տաշիրի տարածաշրջաններում՝ գործակալություններ) դեպք վարողների կողմից հոգեկան առողջական խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների քարտեզագրում չի իրականացվել:

2014-2017թթ. սոցիալական դեպք վարողների կողմից իրականացվել են հոգեկան առողջական խնդրով անդամ ունեցող որոշ ընտանիքների դեպքի վարում, որի շրջանակներում գնահատվել են ընտանիքի ամբողջական կարիքները: Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային բաժնի աշխատողների կողմից հոգեկան առողջական խնդիր ունեցող անդամների մասով ճշտվել է, որ նրանք հաշվառված են «Լոռու մարզային հոգեոյարդաբանական դիսպանսեր»ՊՓԲԸ-ում և գտնվում են համապատասխան մասնագետների հսկողության տակ:

Սոցիալական ծառայությունների Սպիտակի, Ստեփանավանի, Թումանյանի և Տաշիրի տարածքային գործակալությունների կողմից իրականացված դեպքի վարումների ընթացքում ընտանիքի կազմում հոգեկան առողջական խնդիր ունեցող անդամներ չեն եղել:

14. Սպիտակի հոգեկան առողջության կենտրոնում պարբերաբար կազմակերպվել է կենտրոնում բնակվող շահառուների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք:

16. ՀՀ առողջապահության նախարարությունը և մարզպետարանը մշտական հսկողություն են իրականացնում և գործուն աջակցություն ցուցաբերում հոգեկան առողջության հիմնախնդիրների լուծման հարցում:

19. ՀՀ առողջապահության նախարարի կողմից, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզպետարանում, բազմիցս կազմակերպվել են խորհրդակցություններ և քննարկումներ հոգեբուժական ծառայության պատասխանատուների հետ՝ կատարվել է ծառայության կարիքների գնահատում, ֆինանսական վերլուծություն և, շնորհիվ այս միջոցառումների՝ զգալիորեն բարձրացվել է մատուցվող ծառայությունների որակը: 2017 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից «Լոռու մարզային հոգեոյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում կատարվել են ուսումնասիրություններ:

Միաժամանակ հարկ է նշել, որ հայացակարգի միջոցառումների կատարման համար պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին գումարներ չեն հատկացվել և ծախսեր չեն կատարվել:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ